Concern Dialog

Հատուկ հայցային վարույթի կարգով քննվող նոր տեսակի գործեր, հանրային կամ այլընտրանքային ծառայության և նոտարի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործեր. անդրադարձ Քաղդատի փոփոխություններին

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության (**այսուհետ՝ օրենսգիրք**) օրենսգրքում վերջին շրջանում կատարվել են մի շարք էական փոփոխություններ, որոնց մի զգալի մասն ուժի մեջ է մտնելու 01.01.2025 թվականին, դրանց մի մասը ներառված է «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ ՀՕ-222-Ն օրենքում (այսուհետ նաև՝ Օրենք): Այս նյութում անդրադարձ կկատարվի այդ օրենքում տեղ գտած օրենսդրական փոփոխություններին:

Այս նյութը չի անդրադառնում 28.02.2024 թվականին «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացումների կատարելու մասին» թիվ ՀՕ-117-Ն օրենքով նախատեսվող նոր հատուկ վարույթի՝ առանց անձի համաձայնության հիվանդության օջախ մուտք գործելու, դեպքի և (կամ) օջախի համաճարակաբանական հետազոտություն (հետախուզություն) և (կամ) կանխարգելիչ ու հակահամաճարակային միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ գործերի վարույթի առանձնահատկություններին, որոնք ուժի մեջ կլինեն 27.09.2024 թվականից, «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 12.04.2024 թվականի թիվ ՀՕ-171-Ն օրենքում «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» օրենքով նախատեսված պաշտպանական որոշման վերաբերյալ գործերի վարույթի առանձնահատկություններին, որոնք ուժի մեջ են մտնելու 01.07.2024 թվականին, և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» 11.04.2024 թվականի ՀՕ-193-Ն օրենքով «Կատարողական վարույթի մասին» ՀՀ օրենքի շրջանակներում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում տեղ գտած լրացումներին և փոփոխություններին:
Նշված օրենքների շրջանակներում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում տեղ գտած փոփոխություններին և լրացումներին կանդրադառնանք լրացուցիչ՝ առանձին հրապարակումներով:

1. Հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը.

Օրենքում տեղ գտած փոփոխությունների ուժով այսուհետ հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը **(այսուհետ նաև՝ հանրային կամ այլընտրանքային ծառայության վեճեր)** քննելու են ընդհանուր իրավասության դատարանները: Հիշեցնենք, որ մինչև օրենքի ուժի մեջ մտնելը նմանատիպ գործերի քննությունը շարունակելու է իրականացնել ՀՀ վարչական դատարանը:

Նշենք նաև, որ հանրային կամ այլընտրանքային ծառայության վեճերի վերաբերյալ իրավական կարգավորումներն ընդգրկված են Օրենսգրքի «Առանձին աշխատանքային վեճերով վարույթը»

վերտառությամբ 24-րդ գլխում, որպիսի պայմաններում որոշակի բացառություններով հանրային կամ այլընտրանքային ծառայության վեճերի լուծման նկատմամբ կիրառելի են հատուկ հայցային վարույթով քննվող վեճերով սահմանված օրենսդրական կարգավորումները:

Այսպես, հանրային կամ այլընտրանքային ծառայության վեճերով գործերի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե (“ex officio”)՝ կաշկանդված չլինելով դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով և կարող է ազատորեն իր նախաձեռնությամբ ձեռնարկել համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծմանն անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար:

Բացի այդ, հանրային կամ այլընտրանքային ծառայության վեճերով հայցադիմում դատարան ներկայացնելու համար սահմանված է հատուկ կրճատ ժամկետ՝ համապատասխան իրավական ակտն ուժի մեջ մտնելու պահից կամ համապատասխան գործողության (անգործության) կատարման պահից սկսած մեկ ամիս:

Ինչպես աշխատանքային վեճերով, այնպես էլ հանրային կամ այլընտրանքային ծառայության վեճերով վիճարկվող անհատական իրավական ակտի կամ գործողության/անգործության հիմքում ընկած, դրանց ընդունման օրենքով, այլ նորմատիվ կամ գործատուի ներքին իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը, ում վրա է դրված նաև նշված փաստերը հիմնավորող ապացույցները հայցադիմումը վարույթ ընդունելուց հետո մեկշաբաթյա ժամկետում ներկայացնելու պարտականությունը: Ի տարբերություն ՀՀ վարչական դատարանում ներկայումս քննվող հանրային կամ այլընտրանքային ծառայության վեճերի՝ Օրենքի փոփոխություններով ուղղակիորեն սահմանված է, որ դատարանը բոլոր դեպքերում վիճարկվող անհատական ակտը ճանաչելու է անվավեր, եթե դրանում նշված չէ համապատասխան փաստական կամ իրավական հիմքը, կամ երբ իրավասու մարմինը կամ պաշտոնատար անձը անհատական ակտն ընդունելիս խախտել է օրենքով, այլ նորմատիվ կամ գործատուի ներքին իրավական ակտով սահմանված կարգը:

Ինչպես աշխատանքային վեճերով հաշվարկված և չվճարված աշխատավարձ և աշխատանքային հարաբերությունների հետ կապված այլ վճարումներ բռնագանձելու վերաբերյալ դատական գործերը, այնպես էլ հանրային կամ այլընտրանքային ծառայության վեճերով վճարումներ բռնագանձելու գործերը կարող են քննվել արագացված դատաքննության կարգով:

2. Նոտարի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի վարույթը.

Օրենքի ուժի մեջ մտնելու օրվանից՝ 2025 թվականի հունվարի 1-ից, հատուկ հայցային վարույթի կարգով քննվող գործերի ցանկում ներառվելու են նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափությունը վիճարկելու, ինչպես նաև նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու արդյունքում պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ գործերը **(այսուհետ՝ նոտարի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերը),** որոնք այսուհետ քննվելու են ընդհանուր իրավասության դատարաններում: Նախկին կարգավորումներով նոտարի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերը քննվել և

մինչև Օրենքի ուժի մեջ մտնելը քննվելու են ՀՀ վարչական դատարանում:

Օրենքով սահմանվել են նոտարի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով հայցային վաղեմության հատուկ, կրճատ ժամկետներ, մասնավորապես նմանատիպ գործերով հայցադիմումը կարող է ներկայացվել դատարան երեք ամսվա ընթացքում՝ սկսած այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ կարող էր իմանալ վիճարկվող նոտարական գործողության կատարման կամ մերժման մասին: Նոտարի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով անձը կարող է ներկայացնել նաև դրանք արդյունքում պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ պահանջ, որի դեպքում հայցային վաղեմության ժամկետը երեք տարի է: Նոտարի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով հայցադիմումին ներկայացվող պահանջները որպես կանոն նույնանում են հայցային ընդհանուր վարույթի կարգով քննվող գործերով հայցադիմումին ներկայացվող պահանջներին:

Նոտարի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերն ապացույցների ներկայացման կարգի, ապացուցման պարտականությունը բաշխելու վերաբերյալ կանոններով նման են աշխատանքային վեճերով գործերի քննության կանոններին այնքանով, որ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից գործին առնչվող բոլոր ապացույցները պահանջելու մասին, ինչպես նաև նոտարական գործողության կամ նոտարական գործողության կատարումը մերժելու իրավաչափության՝ օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը կրում է պատասխանողը:

Նոտարի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերով դատարանը կայացնում է վճիռ՝ գործողությունը ոչ իրավաչափ ճանաչելու և դրա հետևանքները վերացնելու վերաբերյալ, կամ հայցվող գործողությունը կատարելուն պարտավորեցնելու, ինչպես նաև պահանջի առկայության դեպքում պատճառված վնասը հատուցելու վերաբերյալ:

Հարկ է նշել, որ Օրենքի փոփոխությունները կիրառելի չեն նոտարի կողմից գումարի բռնագանձման պահանջով արձակված կարգադրությունը չեղյալ ճանաչելու հետ կապված դիմումների նկատմամբ, սակայն վերը նշված փոփոխությունները նույնությամբ կիրառելի են նոտարական գործողություն կատարելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձանց գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերի դեպքում:

Վերոնշյալ փոփոխություններին կարող եք ծանոթանալ այստեղ:

Հեղինակի մասին

Սոֆյա Խառատյան

Ավագ իրավաբան, փաստաբան

Սոֆյա Խառատյանը ղեկավարում է Կոնցեռն Դիալոգի ընտանեկան իրավունքի պրակտիկան: Նա տրամադրում է խորհրդատվություն ամուսնաընտանեկան հարցերով, հանդես է գալիս որպես ներկայացուցիչ ընտանեկան վեճերի հաշտարարության փուլում, իրականացնում է ներկայացուցչություն խնամակալության և հոգաբարձության մարմիններում ու դատարաններում: Նա իրականացնում է նաև խորհրդատվություն և ներկայացուցչություն «Երեխայի միջազգային առևանգման քաղաքացիական մոտեցումների մասին» Հաագայի կոնվենցիայի շրջանակներում գործերի հարուցման փուլում և հարուցված գործերով:

Սոֆյա Խառատյանը ակտիվ ներկայացուցչություն է իրականացնում նաև քաղաքացիական այլ գործերով: Նա ունի փաստաբանական գործունեության 5 տարվա փորձառություն: Կոնցեռն Դիալոգի թիմին է միացել 2020 թվականին:

Նախկինում ունեցել է իրավախորհրդատուի 3 տարվա փորձառություն իրավաբանական այլ ընկերությունում:

Սոֆյա Խառատյանը արտոնագրված հաշտարար է:

Կոնցեռն Դիալոգի մասին

Կոնցեռն Դիալոգ փաստաբանական գրասենյակը 1998 թվականից սկսած վստահելի գործընկեր է բիզնեսների և անհատների համար իրավաբանության բոլոր ոլորտներում՝ խորհրդատվությունից մինչև դատական պաշտպանություն:

Ընկերությունը ճանաչված է կորպորատիվ իրավունքի, աշխատանքային իրավունքի, մրցակցության իրավունքի, հարկային իրավունքի, պայմանագրային իրավունքի, լիցենզիաների ու թույլտվությունների, ընտանեկան իրավունքի (ներառյալ երեխաների անդրսահմանային առևանգման /child abduction/) ոլորտների պրակտիկայով: Մասնավորապես, մենք մեծ փորձ ունենք SS, հեռահաղորդակցության և մեդիայի, հանքարդյունաբերության, Էներգետիկայի, կոմունալ ծառայությունների, բանկային և ֆինանսական, առողջապահության, անշարժ գույքի և ոչ առևտրային գործունեության ոլորտներում:

Կոնցեռն Դիալոգի դատավարական փորձառությունը ՀՀ-ում առաջատարներից է, հատկապես բարդ քաղաքացիական, վարչական և արբիտրաժային գործերով:

Փաստաբանական գրասենյակի անդամակությունը TagLaw և Nextlaw ցանցերին և համագործակցությունն առանձին երկրներում գործող տեղական իրավաբանական կազմակերպությունների հետ թույլ է տալիս բարձրորակ ծառայություններ մատուցել հաճախորդներին փաստացիորեն ամբողջ աշխարհում: